ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«06» հունվարի 2022թ.
No Շ/542-2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ

Առանձին տեսակի ապրանքների
դասակարգման վերաբերյալ

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներն իրականացնելու նպատակով և ի կատարումն Մաքսային միության անդամ-պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 30.12.2021թ. թիվ 37/8, 37/9 և 37/13 որոշումների՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն պարզաբանում է հետևյալը.

1. Պողպատե էմալապատ ուղղահայաց անոթը, որի ներքին մակերևույթն ունի ապակե-էմալային բարակ շերտով ծածկույթ, որը կայուն է քայքայիչ նյութերի և միացությունների մեծամասնության ազդեցության նկատմամբ, ինչը թույլ է տալիս կիրառել սարքավորումը (անոթը) քիմիական և դեղագործական արդյունաբերություններում ագրեսիվ և քայքայիչ միջավայրերի պահպանման ժամանակ՝ բաղկացած՝ իրանից, ջերմաչափի պարկուճից, արձակման փականից, հագեցված՝ սարքավորման կափարիչի վրա տեխնոլոգիական շտուցերներով և սուզման խողովակով, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 6-րդ կանոններին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 7309 00 300 0 ստորաենթադիրքում:

2.1. Վերականգնողական և վերակառուցողական վիրաբուժության էնդոպրոթեզը՝ նախատեսված՝ կրծքավանդակում և թոքերում գտնվող առաջնային և մետաստատիկ նորագոյացությունների բուժումից հետո կրծքավանդակի ոսկորների ընդարձակ հատվածների և դրա արատների լրացման համար, պատրաստված՝ պոլիպրոպիլենային և պոլիէսթերային մանրաթելերից՝ գործելու տեխնիկայով, իմպլանտավորվող (ներդրվող) հիվանդի մարմնում, որից հետո այն մնում է այնտեղ, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 6-րդ կանոններին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 9021 39 900 0 ստորաենթադիրքում:

2.2" Վիրաբուժական ցանցերը, որոնք իրենցից ներկայացնում են մեկանգամյա օգտագործման չներծծվող խոշոր անցքերով վիրաբուժական ցանցեր՝ պատրաստված տրիկոտաժային տեխնիկայով բժշկական որակի մոնոֆիլամենտային պոլիպրոպիլենային մանվածքից՝ 60 մմ x 110 մմ չափսերով, նախատեսված՝ շարակցական հյուսվածքի կորստի համալրման նպատակով ճողվածքների վիրաբուժական բուժման, ինչպես նաև հյուսվածքների ամրապնդման և աջակցման համար այնպիսի դեպքերում, ինչպիսիք են որովայնի ճողվածքները, հետվիրահատական ճողվածքները, ազդրային ճողվածքները, աճուկային ճողվածքները, պորտի ճողվածքները, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 6-րդ կանոններին համապատասխան, դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 9021 90 900 9 ստորաենթադիրքում:

3" Արևածաղկի սերմերի կազմատման սարքավորումը՝ բաղկացած՝ շղթայական փոխակրիչներից, զետեղարանից (բունկեր), հատիկի մասնատման մեքենայից, զտամասերի բաժանման մեքենայից, յուղատու փոշու անջատման մեքենայից, պտուտակավոր փոխակրիչից, նախատեսված՝ սերմերի քանդման և կեղևազրկման, դրանց՝ միջուկի, կեղևի, չքանդված սերմերի և յուղատու փոշու բաժանման համար, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին և 6-րդ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

կանոններին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 8438 80 ենթադիրքում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
Մ/Ծ ԳՆԴԱՊԵՏ

6/6/2022

X

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Signed by: NERSISYAN SHUSHANIK 5308860769 ՇՈՒՇԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կատ.՝ ապրանքների դասակարգման և սակագնային կարգավորման բաժին